ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2022թ. **N ---- Ա**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**««ՏԵՂԱԿԱՆ ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ»
ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԵՐԵՎԱՆԻ 2023-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»**

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 33-րդ կետով՝ **Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

Հաստատել «Տեղական բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակում Երևանի 2023-2024 թվականների գործողությունների ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ**

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2022 թվականի դեկտեմբերի ---ի
N ----- -Ա որոշման

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Նախաբան

Հայաստանի Հանրապետության կառավարությունը միացել է «Բաց կառավարման գործընկերություն» (ԲԿԳ) նախաձեռնությանը 2011 թվականին և անդամակցությունից ի վեր իրականացրել է չորս ազգային գործողությունների ծրագրեր:

Գործողությունների ծրագրերը միտված էին բարելավելու կառավարության կողմից ստանձնած բարեփոխումների օրակարգը՝ դարձնելով դրանք ավելի թափանցիկ, հաշվետու, մասնակցային և նորարար:

ԲԿԳ-Հայաստան 2018-2020 թթ. գործողությունների չորրորդ ծրագիրը գնահատվել է, որպես առավել բարեփոխիչ ԲԿԳ Անկախ հաշվետվական մեխանիզմի (ԱՄՀ) զեկույցում: Չորրորդ ծրագիրը աչքի էր ընկնում հանձնառությունների լավ կատարմամբ՝ չնայած համավարակի և պատերազմի մարտահրավերներին: Հայաստանը «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության անդամակցումից ի վեր բարելավել է իր գործողությունների ծրագրի մշակման, իրականացման, հանձնառությունների ստանձման, ավելի հասցեական և հավակնոտ հանձնառությունների ստանձման գործընթացները: ՀՀ կառավարությունը իրականացրել է 4 ազգային գործողությունների ծրագիր:

2022 թվականի փետրվարին Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում տեղադրվեց հայտարարություն անդամակցելու «Տեղական ԲԿԳ» նախաձեռնությանը:

2022 թվականի մարտի 4-ին Երևանի քաղաքապետարանում տեղի ունեցավ հանդիպում-քննարկում, որին մասնակցում էին ԲԿԳ-Հայաստան քարտուղարության, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները: Հանդիպման նպատակն էր քննարկել Երևանի քաղաքապետարանի «Տեղական ԲԿԳ» նախաձեռնության անդամակցության նպատակահարմարությունը: Արդյունքում 2022 թվականի մարտի 15-ին Երևանի քաղաքապետարանը քաղաքացիական հասարակության, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ համատեղ դիմեց «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության ղեկավար կոմիտեի անդամներին՝

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2022 թվականի դեկտեմբերի ---ի
N ----- -Ա որոշման

«Տեղական ԲԿԳ» անդամ դառնալու նպատակով, և 2022 թվականի մայիսի 17-ին դարձավ «Տեղական Բաց կառավարում» նախաձեռնության անդամ:

2022 թվականի հունիսի 20-ին «Տեղական ԲԿԳ» նախաձեռնության շրջանակում Երևանի քաղաքապետարանում տեղի ունեցավ հանդիպում-քննարկում՝ ԲԿԳ տարածաշրջանային տնօրենի տեղեկալ Շրեյա Բասուի հետ:

2022 թվականի հունիսին կայացավ «Ապակենտրոնացումը Հայաստանում. նոր օրակարգ՝ Հայաստանում իրականացված տարածքային և վարչական բարեփոխումներից հետո» միջազգային համաժողովը: Համաժողովի նպատակն էր գնահատել Հայաստանի մարտահրավերները՝ քաղաքականության մշակման, ապակենտրոնացման ռազմավարության, շահագրգիռ կողմերի դերի և նրանց միջև փոխգործակցության ապահովումը: Համաժողովի ընթացքում քննարկվեց նաև Բաց կառավարման գործընթացը և առանձնահատկությունները տեղական մակարդակում, անդրադառնալով այնպիսի հարցերին, ինչպիսիք են՝ բարեվարքությունը, մասնակցությունը, հաշվետվողականությունը և կոռուպցիան տեղական մակարդակում:

Նախաձեռնության հետ կապված տեղեկատվության հասանելիության և ընթացիկ գործունեության վերաբերյալ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, հասարակական կազմակերպությունների, քաղաքացիների շրջանում իրազեկվածությունն ապահովելու նպատակով ստեղծվեց Երևանի «Տեղական ԲԿԳ» նախաձեռնության ֆեյսբուքյան էջ, որտեղ տեղադրվում է իրականացված և նախատեսվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն:

2022 թվականի օգոստոսի 18-ին տեղի ունեցավ առցանց հանդիպում-քննարկում «Տեղական ԲԿԳ» նախաձեռնության փոխտնօրեն Ռուդի Բորմանի, Երևանի քաղաքապետարանի «Տեղական ԲԿԳ» նախաձեռնության աշխատանքային գործընթացները համակարգող/կոնտակտային անձանց, առաջարկներ ներկայացրած քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և այլ ակտիվ քաղաքացիների հետ: Հանդիպման ընթացքում քննարկվեց գործողությունների ծրագրի մշակման նախնական ուղղությունները, բնակչության առավել լայն շրջանակների իրազեկման համար հնարավոր այլընտրանքային տարբերակները, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ առավել ճկուն աշխատելու տարբերակները, ներկայացված առաջարկների համապատասխանությունը ԲԿԳ սկզբունքներին, Գործողությունների ծրագրի մշակման ժամկետները և այլն:

«Տեղական ԲԿԳ» նախաձեռնության գործողությունների ծրագրի մշակման նպատակով Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում տեղադրվեց «Տեղական ԲԿԳ» նախաձեռնության շրջանակում առաջարկների ներկայացման հայտարարություն:

Երևանի քաղաքապետարանի կողմից առաջարկվեցին 9 ուղղություններ, որոնց շուրջ քաղաքացիները կարող էին ներկայացնել իրենց առաջարկությունները: Մասնակցության հայտ և պատրաստակամություն հայտնեցին մոտ 12 քաղաքացիական հասարակության կազմակերպություն:

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2022 թվականի դեկտեմբերի ---ի
N ----- -Ա որոշման

Ընդհանուր առմամբ հավաքագրվեց մոտ 45 առաջարկ, որոնցից շատերը կամ բովանդակային առումով կրկնություն էին, կամ չէին համապատասխանում ԲԿԳ սկզբունքներին, կամ էլ ենթակա էին հստակեցման և լրամշակման: Առաջարկներն ուղղված էին հասարակական տրանսպորտի, բնակչությանը մատուցվող ծառայությունների ոլորտի բարելավմանը, բարեվարքության ոլորտների գործունեության թափանցիկությանը, հաշվետվողականությանը, նորարարությանը, առողջապահության, կայուն սոցիալական միջավայրի բարեվարքության ոլորտների մասնակցայնության ապահովմանը, աղբահանության, կանաչ տնտեսության ոլորտում նորարարությանը: Այնուհետև Երևանի քաղաքապետարանում տեղի ունեցավ հանդիպում-քննարկում՝ Երևանի քաղաքապետի խորհրդականի, Զարգացման և ներդրումային ծրագրերի վարչության աշխատակիցների, ԲԿԳ-Հայաստան գրասենյակի համակարգող, ինչպես քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ: Հանդիպումը կազմակերպվել էր Երևանի քաղաքապետարանի կողմից: Մասնակիցները միասին քննարկեցին առաջարկները և դասակարգեցին դրանք թվայնացման, մասնակցային և ինովացիոն խմբերի:

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2022 թվականի դեկտեմբերի ---ի
N ----- -Ա որոշման

Ռազմավարական տեսլական

Երևան համայնքը բավարար ժամանակահատվածում իր իրավասության շրջանակներում զգալի ջանքեր է գործադրել **տեղական մակարդակում ժողովրդավարական, արդար և լայն մասնակցության վրա հիմնված մեխանիզմների** ստեղծման ուղղությամբ: Այդ բարեփոխումները չէին կարող իրականացվել առանց քաղաքացիների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և այլ շահագրգիռ կողմերի անմիջական մասնակցության:

2002 թվականին Հայաստանը վավերացրել է *Տեղական Ինքնակառավարման Եվրոպական Խարտիան*, իսկ 2013 թվականին' տեղական ինքնակառավարման գործերին մասնակցելու իրավունքի մասին Խարտիայի լրացուցիչ արձանագրությունները: Համապատասխան փոփոխություններ են կատարվել նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում, որպեսզի ապահովվի և խրախուսվի քաղաքացիների մասնակցությունը տեղական մակարդակում որոշումների կայացման գործընթացին՝ ապահովելով Երևանի բոլոր վարչական շրջանների հավասարաչափ զարգացումը:

Երևանը նաև ակտիվորեն մասնակցում է Քաղաքապետների եվրոպական դաշնագրին, որի նպատակն է խթանել «կանաչ տնտեսական զարգացումը» համայնքներում, բարելավել բնակիչների կյանքի որակը ժամանակակից էներգախնայող տեխնոլոգիաների և էներգիայի վերականգնվող աղբյուրների օգտագործման միջոցով:

Երևանը համարվում է եվրոպական քույր քաղաքների անդամ և ակտիվ համագործակցում է եվրոպական առաջատար քաղաքների հետ բոլոր մակարդակներում: Երևանի քաղաքապետարանը համագործակցում է արտերկրի ավելի քան 50 քաղաքների հետ և անդամակցում միջազգային 8 կազմակերպությունների հետ՝ ստեղծելով պայմանագրային ծավալուն դաշտ և համատեղ իրականացվող ծրագրեր:

Վերջին շրջանում նախաձեռնությունները միտված են Երևանի քույր և գործընկեր քաղաքների հետ համագործակցության արդյունավետության բարձրացմանը և միջազգային կապերի հետագա ընդլայնմանը:

Ընդլայնվել կամ գործընկերային նոր հարաբերություններ են հաստատվել եվրոպական, ասիական և ԱՊՀ տասնյակ քաղաքների և կազմակերպությունների հետ՝ ԱՊՀ մայրաքաղաքների և խոշոր քաղաքների Միջազգային ասամբլեայի, Ֆրանսախոս քաղաքների քաղաքապետերի միջազգային ասոցիացիայի /AIMF/, Միջազգային քաղաքային համայնքների Լուսավորում ասոցիացիայի /LUCI/, Եվրոպական քաղաքների

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2022 թվականի դեկտեմբերի ---ի
N ----- -Ա որոշման

ասոցիացիայի /EUROCITIES/, Եվրոպական հանձնաժողովի կողմից իրականացվող CIUDAD ծրագրի GOSPEL ենթածրագրի, Եվրոպական խորհրդի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի, «Ստրասբուրգի բարեկամ քաղաքների ակումբի», Համաշխարհային ժառանգության քաղաքների կազմակերպության հետ և այլն: Մայրաքաղաքը շարունակում է միանալ տարբեր ուղղվածություն ունեցող միջազգային նախաձեռնություններին և հռչակագրերին:

Երևանը՝ որպես Հայաստանի համայնքների միության անդամ, մշտապես կիսվում և առաջ է տանում տեղական ինքնակառավարման մարմինների շրջանում լավ կառավարման սկզբունքները: ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ապակենտրոնացման բարեփոխումների շրջանակներում Երևանը ներդրել է **քաղաքացիների մասնակցությամբ բյուջեի կազմման գործընթացը, «Ակտիվ քաղաքացի» մասնակցային գործիքը և սահմանել է համայնքի ավագանու նիստերի ուղիղ հեռարձակումը:**

ԲԿԳ-ն միշտ եղել է հայկական համայնքների տեսադաշտում: Քաղաքացիական հասարակության տեղական կազմակերպությունները եղել են ԲԿԳ ազգային թիրախային խմբերի անբաժանելի մաս:

ԲԿԳ ենթաօրենսդրական ցանցին միանալու նպատակով Հայաստանի կառավարությունը դոնոր գործընկերների աջակցությամբ բացառիկ գնահատական է տվել առանցքային համայնքների միջև բաց կառավարմանը: Իրականացվել է կառավարման հանձնառության, քաղաքացիական հասարակության հասունության մակարդակների, ինչպես նաև տնտեսական ներուժի առկայության և քաղաքացիների մասնակցության ցուցանիշների գնահատում: **ԲԿԳ գործընկերությանն անդամակցելը Երևանին հնարավորություն կտա համապատասխանեցնել և բարելավել հանրային ծառայությունների մատուցման համակարգը, ինչպես նաև այդ գործընթացում ներգրավել Հայաստանի քաղաքացիներին:**

Երևանն ակտիվ ներդրում է ունեցել Հայաստանի ժողովրդավարական գործընթացում, հատկապես 2020 թվականի էսկալացիայից հետո, ինչպես նաև COVID-19-ի հետ կապված խնդիրներում:

Ճիշտ կառավարման քաղաքականությունը Երևանի քաղաքապետարանի համար առաջնահերթություն է: **Շրջակա միջավայրի պահպանության, թափոնների կառավարման, կոմունալ ծառայությունների մատուցման քաղաքականությունը**, ինչպես նաև **գործարար միջավայրի զարգացման** քաղաքականությունը համատեղ մշակվել և իրականացվել է համայնքային իշխանությունների, տեղական քաղաքացիական հասարակության և մասնավոր կազմակերպությունների կողմից:

Ստորև բերված են Երևանի քաղաքապետարանի կողմից գնահատված առկա հիմնական ձեռքբերումներից մի քանիսը:

- Հնգամյա և միամյա զարգացման ծրագրերի, համայնքի բյուջեի մշակման ժամանակ **քաղաքացիներին՝ հանրային կարևորություն ներկայացնող որոշումների ընդունմանը մասնակցելու հնարավորություն ընձեռող** հանրային

քննարկումների, հանրային բաց լսումների, հանդիպումների, հարցումների կազմակերպում: Այդպիսով քաղաքացիներին հնարավորություն ընձեռելով կարծիք հայտնել ավագանու որոշման նախագծերի, քաղաքի կողմից մատուցվող ծառայությունների ընթացակարգերի, հարկային պարտավորությունների, հաշվետվությունների, համայնքային սեփականության գույքի կառավարման և այլնի վերաբերյալ:

- **«Ակտիվ քաղաքացի» գործքի ստեղծում, որը հնարավորություն է տալիս** քաղաքացիներին ունենալ էլեկտրոնային մասնակցության հնարավորություն որոշումների կայացման գործընթացում**:**
- **Պաշտոնական վեբ-կայքերի տեղեկատվության թափանցիկության ապահովում**՝ ավագանու և քաղաքապետի որոշումների, կարգադրությունների, ուղերձների և այլ իրավական ակտերի կանոնավոր հրապարակումներ Երևանի քաղաքապետարանի պաշտոնական համացանցային կայքում:
- **«ԵՄ-ն՝ Երևանի համար արևային համայնք» դրամաշնորհային ծրագրի իրականացում**, որի նպատակն է 97 բազմաբնակարան շենքերի տանիքներին արևային ֆոտովոլտային համակարգերի տեղադրման (PV), ներշենքային և բակային տարածքների լուսավորության համակարգերի արդիականացման միջոցով կրճատել ընդհանուր օգտագործման տարածքներում էլեկտրաէներգիայի սպառումը և բարձրացնել բնակիչների հարմարավետության մակարդակը:
- **«Երևան Կանաչ քաղաք գործողությունների ծրագիրը»** մայրաքաղաքի բնապահպանական խնդիրների լուծման միջոցով քաղաքի տնտեսական և սոցիալական զարգացմանը նպաստելն է, մասնավորապես՝ քաղաքի կայուն զարգացումը, բարեկարգումն ու կանաչապատումը, կոմունալ ծառայությունների որակի բարձրացումը, հասարակական տրանսպորտի բարեփոխումները, մայրաքաղաքի ճանապարհային ենթակառուցվածքների օպտիմալացումը, աղետների ռիսկերի նվազեցումը և տարերային աղետների նկատմամբ կայունության բարձրացումը, շրջակա միջավայրի և բնակչության առողջության պաշտպանությունը:
- **Եվրոպական Միության Կայուն էներգիայի շաբաթն** ավանդաբար կազմակերպվող և բարձր վարկանիշ ունեցող գործողությունների շարք է, որի նպատակն է մարդկանց իրազեկումը կլիմայի փոփոխության, էներգախնայողության, վերականգնվող էներգետիկայի և հարմարվողականության վերաբերյալ: Արդեն 3-րդ տարին է, ինչ Երևանի քաղաքապետարանը միացել է նախաձեռնությանը և, կարևորելով բնապահպանական կրթության զարգացումը, կազմակերպել է ինտելեկտուալ, նկարչական և լուսանկարչական մրցույթներ, «Էներջի սիթի» հաքաթոն, «Աշակերտները կլիմայի համար» կրթական միջոցառումը, «Իրազեկ սերունդ՝ կայուն ապագա» խորագիրը կրող երկօրյա ուսուցողական սեմինար-միջոցառում, ոլորտային իրազեկման մեկամսյա արշավ և «Կայուն տեխնոլոգիաներ» խորագիրը կրող էքսպո-ցուցահանդես՝ ապահովելով

հազարավոր մարդկանց ներգրավվածությունը միջոցառումներին և ոլորտային իրազեկվածության բարձրացումը:

- Ավագանու **նիստերի առցանց հեռարձակումը:**
- Համայնքի ղեկավարին առընթեր **կանանց և երիտասարդության հարցերով խորհրդատվական մարմինների** անդամների իրազեկվածության բարձրացման ծրագիր: Ծրագիրը կառուցվել և մշակվել է ՄԱԶԾ-ի հետ համատեղ:

Տեղական մակարդակում ներկա և կանխատեսելի կլիմայական վտանգների բացահայտման և հարմարվողականության ու մեղմման ծրագրերի կազմման նպատակով մշակվել են այնպիսի ռազմավարական ծրագրեր, ինչպիսիք են՝ Երևանի կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագիրը, Կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագիրը, Երևան Կանաչ քաղաք գործողությունների ծրագիրը, ինչպես նաև «Դոնաթ» տնտեսական մոդելը, որտեղ, հաշվի առնելով քաղաքի առջև ծառացած մարտահրավերները, սահմանվել են առաջնահերթություններ, որոնց հետևելու դեպքում՝ քաղաքը հնարավորություն կունենա կայուն զարգացման միջոցով հասնելու համակարգային փոփոխությունների:

Երևան համայնքն ունի քաղաքացիական հասարակության ներգրավածության մեծ փորձ և համագործակցում է երկրի մակարդակով ճանաչում ունեցող մի շարք ՀԿ-ների հետ ինչպիսիք են՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն և «Թրանսփարենսի ինթերնեյշնալ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ն:

Այնուամենայնիվ, անհրաժեշտ է **ավելի ամրապնդել քաղաքացի-քաղաքապետարան** ակտիվ հաղորդակցության բարելավման և կարևորագույն սոցիալ-տնտեսական ոլորտներում նրանց մասնակցության խթանման գործընթացը, որպեսզի ապահովվի քաղաքականության կայունությունը:

Երևան համայնքը և շահագրգիռ կողմերը կարևորում են քաղաքացիների **մասնակցայնության խթանումը** համայնքում կայանալիք հանդիպումներին, քննարկումներին և լսումներին: Այս համատեքստում առաջարկվում է համայնքային կառավարման և ժողովրդավարական գործընթացների ոլորտներում որոշումների կայացման մասնակցային գործընթացի ապահովում բնակիչների, երիտասարդների շրջանում: Առաջարկը նպատակ է հետապնդում նաև աջակցել մարդակենտրոն քաղաքականության ձևավորմանը, քաղաքացիների շրջանում իրազեկվածության մակարդակի բարձրացմանը և հաշվետու հանրային կառավարմանը՝ համայնք-բնակիչ ընդլայնված երկխոսության միջոցով:

Համայնքի զարգացման և առաջխաղացման ուղենիշ են հանդիսանում համայնքի զարգացման միամյա, հնգամյա ծրագրերը, ռազմավարական ծրագրերը: Համաձայն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 83-րդ հոդվածի 1-ին կետի՝ Երևանի քաղաքապետը ավագանուն է ներկայացնում Երևանի զարգացման միամյա, հնգամյա ծրագրերը: Նախքան ծրագրերն ավագանու քննարկմանը

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2022 թվականի դեկտեմբերի ---ի
N ----- -Ա որոշման

ներկայացնելը տեղի են ունենում հանրային լսումներ: Երևանի քաղաքապետարանում հանրային լսումների իրականացման գործընթացի թափանցիկությունն ապահովելու, ինչպես նաև քաղաքացիներին և այլ շահագրգիռ կազմակերպություններին իրազեկելու համար նախքան հանրային բաց լսումներն իրականացնելն օրենքով սահմանված կարգով հանրային քննարկումների վերաբերյալ հայտարարությունը հրապարակվում է ՀՀ արդարադատության նախարարության իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական (www.e-draft.am) կայքում, Երևան քաղաքի պաշտոնական (www.yerevan.am) կայքում, ինչպես նաև «Առավոտ» օրաթերթում:

Սակայն այդ գործընթացի վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու և առավել արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ է «Տեղական ԲԿԳ» նախաձեռնության շրջանակներում այն դարձնել առավել թափանցիկ, քաղաքացիների համար առավել հասանելի, հաշվետվողական: Պարբերաբար Երևանի քաղաքապետարանում իրականացվում են հանրային քննարկումներ, բաց լսումներ՝ կապված համայնքի բյուջեի, զարգացման ծրագրերի, տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի նախագծերի քննարկման վերաբերյալ:

«Տեղական ԲԿԳ» նախաձեռնության շրջանակում առաջարկվում է, համագործակցելով տվյալ բնագավառը համակարգող ՀՀ Կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի և ՀՀ-ում գործող բջջային օպերատորների հետ, ստեղծել անմիջական կապ՝ հանրային լսումների գործընթացին քաղաքացիների իրազեկվածության և մասնակցայնության ապահովման շրջանակի ընդլայնման համար, կկիրառվեն նաև վարքագծային գիտության գործիքներ, որոնք կխթանեն քաղաքացիների մոտ հետքրքրվածությունն ու կնպաստեն ակտիվ մասնակցությանը: Այն կնպաստի քաղաքացիների շրջանում տեղեկատվության առավել մատչելի հասանելիությանը, թափանցիկությանը, հանրային հաշվետվողականությանը, որոշումների կայացման գործընթացին հանրային մասնակցայնության բարձրացմանը, ինչպես նաև նորարար մեխանիզմների ապահովմանը:

Կարևոր հանձնառություններից է համարվում նաև համայնքային ծառայողների շրջանում **բարեվարքության համակարգի կայացման գործընթացը**: Այս համատեքստում համագործակցելով ԱՄՆ ՄԶԳ Հայաստան Բարեվարքության (ARMENIA INTEGRITY PROJECT) ծրագրի հետ որոշում է կայացվել համայնքային ծառայողների շրջանում Իրականացնել համայնքային ծառայողների բարեվարքության վերաբերյալ դասընթացների շարք՝ Երևանի քաղաքապետարանի (ներառյալ՝ վարչական շրջանների) համայնքային ծառայողների, Երևանի քաղաքապետարանի էթիկայի հանձնաժողովի անդամների և բարեվարքության կազմակերպիչների համար: Գործողությունների ծրագրի շրջանակում ակնկալվում է, որ Երևանի քաղաքապետարանում կներդրվի բարեվարքության համակարգ, կբարելավվի Երևանի քաղաքապետարանի համայնքային ծառայողների բարեվարքության աստիճանը, կբարելավվեն բարեվարքության վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի համայնքային ծառայողների կարողությունները, կբարձրանա նրանց կողմից բարեվարքության ընկալումը: Այն

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2022 թվականի դեկտեմբերի ---ի
N ----- -Ա որոշման

կնպաստի **թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքների** ապահովմանը:

Բարեվարքության պատասխանատուի և էթիկայի հանձնաժողովի արդյունավետ գործարկումը կարևոր է Երևանի քաղաքապետարանում էթիկայի և բարեվարքության համակարգի լիարժեք ինստիտուցիոնալացման տեսանկյունից, ինչը համահունչ է ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 13-ի «Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարությունը, 2022-2024 թվականների ճանապարհային քարտեզը և արդյունքային շրջանակը, ռազմավարության իրականացման հսկողությունն ու համակարգումն ապահովող անձանց ցանկը հաստատելու մասին» թիվ 691-Լ որոշման 2-րդ հավելվածի (Հենասյուն 3՝ մարդկային ռեսուրսների կառավարում և հանրային ծառայություն) 3.16 կետին՝ Պետական համակարգում էթիկայի և բարեվարքության համակարգի լիարժեք ինստիտուցիոնալացում: Բարեվարքության համակարգի արդյունավետ գործարկման նախապայմաններից է անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների տրամադրումը բարեվարքության հարցերով կազմակերպիչներին և Երևանի քաղաքապետարանի համայնքային ծառայողներին: Երևանի քաղաքապետարանում կոռուպցիոն ռիսկերի գնահատման համակարգի ներդրման շնորհիվ Երևանի քաղաքապետարանում՝ սահմանված պարբերականությամբ կիրականացվի կոռուպցիոն ռիսկերի գնահատում՝ քաղաքապետարանի և վարչական շրջանների աշխատակազմերում, ինչը կօգնի վեր հանել հնարավոր կոռուպցիոն ռիսկերը և իրականացնել դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումներ՝ դրանով իսկ բարձրացնելով կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի կանխարգելման արդյունավետությունը:

Ջերմոցային գազերի արտանետման հիմնական ոլորտը էներգետիկան է, իսկ ջերմոցային գազերի մեծ մասն արտադրվում է քաղաքային միջավայրում, հատկապես ուրբանիզացիայի բարձր մակարդակ ունեցող քաղաքներում: Այս առումով Երևանը թիրախային քաղաք է համարվում: Քաղաքներն օգտագործում են աշխարհի էներգիայի մատակարարման մեծ մասը և պատասխանատու են էներգիայի հետ կապված ջերմոցային գազերի գլոբալ արտանետումների՝ շուրջ 70 տոկոսի համար: Այս արտանետումների աճող մակարդակն արդեն հանգեցնում է կլիմայի փոփոխության:

Ուստի, ներկայում կլիմայի փոփոխության դեմ պայքարի շրջանակներում շատ կարևոր է քայլեր ձեռնարկել քաղաքային միջավայրում բարձրացնելու էներգախնայողության և էներգաարդյունավետության մակարդակը և զարգացնել վերականգնվող էներգետիկան՝ կրճատելով CO_2 արտանետումների մակարդակը:

Վերջին մի քանի տարիների ընթացքում Երևանը զգալի քայլեր է ձեռնարկել կլիմայի փոփոխության ազդեցության մեղմման, էներգաարդյունավետության, վերականգնվող էներգիայի և կլիմայի հարմարվողականության հատուկ միջոցառումների իրականացման ուղղությամբ: Ունենք մշակված ռազմավարական ծրագրեր, որոնք նախադեպային են այս տարածաշրջանում: Դրանցից մեկն էլ «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագիրն է, որը մշակվել է ԱՊՀ տարածաշրջանում առաջին անգամ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2022 թվականի դեկտեմբերի ---ի
N ----- -Ա որոշման

և հիմնված է ՎԶԵԲ-ի մեթոդաբանության վրա՝ Տեղական բնապահպանական նախաձեռնությունների միջազգային խորհրդի (ICLEI) և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության հետ համատեղ: Երևանի համար մշակված այս ծրագիրը ՎԶԵԲ-ի «Կանաչ քաղաքներ» մոտեցման առաջին կիրառությունն է: «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագիրը մինչև 2030 թ. իրականացվելիք կանաչ գործողությունների ռազմավարական փաստաթուղթ է, որի իրագործման համար նպատակաուղղված քաղաքականություն է իրականացավում համայնքի կողմից: Ներկայում մշակման փուլում է գտնվում քաղաքի համար կլիմայի փոփոխության հարմարվողականության ռազամավարական ծրագրի կազմման գործընթացը:

Մեծածավալ աշխատանքներ են իրականացվել և իրականացվում վերականգնվող էներգիայի աղբյուրների կիրառման, բազմաբնակարան և հասարակական շենքերի ջերմամեկուսացման, էներգաարդյունավետության մակարդակի բարձրացման, տրանսպորտային համակարգի արդիականացման և խելացի լուծումների կիրառման ուղղությամբ:

«Տեղական ԲԿԳ» գործողությունների ծրագրի շրջանակում նախատեսվում է Երևանի քաղաքապետարանի պաշտոնական էջում ստեղծել **«Going Green» անվանումով հարթակ,** որը բաղկացած կլինի երեք բաղադրիչներից (Կանաչ գործողություններ, «Կանաչ կնիք», Կանաչ գնումներ) և կներառի համապարփակ մոտեցում մունիցիպալ կառավարման բոլոր մակարդակներում կայուն գործելակերպի նկատմամբ: Հարթակը պարբերաբար կթարմացվի և կպարունակի քաղաքապետարանի կողմից իրականացված էներգաարդյունավետ ծրագրերի արդյունքում կրճատված ջերմոցային գազերի արտանետումների, օդի աղտոտվածության մակարդակի, խնայված էլեկտրաէներգիայի վերաբերյալ տեղեկատվություն, կխթանի համայնքային ենթակայության կազմակերպություններին՝ համապատասխանել կայունության չափանիշներին և ստանալ համապատասխան «Կանաչ կնիք», կնպաստի կանաչ գնումների ընթացակարգով ապրանքների և ծառայությունների ձեռքբերմանը, որոնք կարող են նպաստել կայուն սպառման և արտադրությանը:

Հանձնառության իրականացման արդյունքում կբարելավվի **իրազեկվածությունը «կանաչ» ծրագրերի իրականացման և վերահսկման նկատմամբ:**

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2022 թվականի դեկտեմբերի ---ի
N ----- -Ա որոշման

<table>
<tr><th colspan="4">Հանձնառություն 1. Բաց, թափանցիկ և մասնակցային հանրային քննարկումների կազմակերպում և իրականացում</th></tr>
<tr><td colspan="2">Հանձնառության անվանումը</td><td colspan="2">Նախատեսել 2023-2024թթ. ընթացքում հանրային քննարկումներին բնակչության մասնակցայնության բարձրացում</td></tr>
<tr><td colspan="2">Հանձնառությունը իրականացնող մարմին</td><td colspan="2">Երևանի քաղաքապետարան</td></tr>
<tr><td colspan="2">Հանձնառությունը իրականացնող մարմնի պատասխանատու անձ
Էլ. հասցե
Հեռախոս</td><td colspan="2">Զարգացման և ներդրումային ծրագրերի վարչության պետի տեղակալ՝
Մերի Հարությունյան
zargacum@yerevan.am
011514227</td></tr>
<tr><td rowspan="2">Այլ շահագրգիռ մասնակից մարմիններ</td><td>Պետական կառավարման և այլ մարմիններ</td><td colspan="2">• Տվյալ բնագավառը համակարգող ՀՀ Կառավարության լիազորած պետական կառավարման մարմին
• «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ,
• «Յուքոմ հեռահաղորդակցության ընկերություն» ՓԲԸ
• «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ</td></tr>
<tr><td>Հասարակական կազմակերպություններ, մասնավոր հատված, այլ կազմակերպություններ</td><td>• « Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն » ՀԿ՝ ԱՄՆ ՄԶԳ Հայաստան Բարեվարքության ծրագրի (ARMENIA INTEGRITY PROJECT) ֆինանսավորմամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրի շրջանակներում
• «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ</td><td>Այլ ՀԿ-ներ և կազմակերպություններ, որոնք կմիանան հանձնառությանը</td></tr>
<tr><td colspan="2">Խնդրի սահմանումը</td><td colspan="2">Խթանել տեղական ինքնակառավարման համակարգում հրապարակայնությունը, մասնակցայնությունը և թափանցիկությունը հանրային քննարկումների կազմակերպման և իրականացման գործընթացում՝ ներդնելով նոր այլընտրանքային իրազեկման հրապարակային և թափանցիկ համակարգ (պիլոտային), որը</td></tr>
</table>

	հնարավորություն կընձեռի հանրության բոլոր շերտերին և խմբերին ներգրավվել հանրային կարևորություն ներկայացնող որոշումների կայացման գործընթացին: Երևանի քաղաքապետարանում հանրային լսումների իրականացման գործընթացի թափանցիկությունն ապահովելու, ինչպես նաև քաղաքացիներին և այլ շահագրգիռ կազմակերպություններին իրազեկելու համար նախքան հանրային բաց լսումներն իրականացնելն օրենքով սահմանված կարգով հանրային քննարկումների վերաբերյալ հայտարարությունը հրապարակվում է ՀՀ արդարադատության նախարարության իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական (www.e-draft.am) կայքում, Երևան քաղաքի պաշտոնական (www.yerevan.am) կայքում, ինչպես նաև «Առավոտ» օրաթերթում: Հաշվի առնելով կազմակերպված քննարկումներին քաղաքացիների մասնակցության ցածր ցուցանիշները՝ անհրաժեշտություն է առաջացել, օրենքով սահմանված իրազեկման միջոցների կիրառումից զատ, ներդնել հավելյալ մեխանիզմներ քաղաքացիների մոտ հանրային գործընթացների նկատմամբ հետաքրքրվածությունը և դրանց մասնակցելու շահագրգռվածությունը բարձրացնելու նպատակով: Բնակչությանն իրազեկելու գործընթացն առավել արդյունավետ իրականացնելու համար նախաձեռնվում է ԲԿԳ-ի շրջանակներում նշված գործընթացն առավել թափանցիկ, քաղաքացիների համար առավել հասանելի, հաշվետվողական դարձնելու գործընթացը: Պարբերաբար Երևանի քաղաքապետարանում իրականացվում են հանրային քննարկումներ, բաց լսումներ՝ կապված համայնքի բյուջեի, զարգացման ծրագրերի, տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի նախագծերի քննարկման վերաբերյալ: ԲԿԳ-ի հետ համագործակցելու նպատակն է հասցեական հաղորդագրությունների և վարքաբանական

	միջամտությունների միջոցով մեծացնելու քաղաքացիների իրազեկվածության ապահովման շրջանակի ընդլայնումը:
Հիմնական նպատակ	Առաջարկի հիմնական նպատակն է համայնքային կառավարման և ժողովրդավարական գործընթացների ոլորտներում որոշումների կայացման մասնակցային գործընթացի ապահովում բնակիչների, երիտասարդների շրջանում: Առաջարկը նպատակ է հետապնդում նաև աջակցել մարդակենտրոն քաղաքականության ձևավորմանը, քաղաքացիների շրջանում իրազեկվածության մակարդակի բարձրացմանը և հաշվետու հանրային կառավարմանը՝ համայնք-բնակիչ ընդլայնված երկխոսության միջոցով: Երևանի քաղաքապետարանը բոլոր 12 վարչական շրջաններում կկիրառի վարքագծային գիտության գործիքներ, որոնք կխթանեն քաղաքացիների մոտ հետքրքրվածությունն ու կնպաստեն ակտիվ մասնակցությանը:
Հանձնառության համառոտ նկարագրություն	Մշակել հաղորդակցության և տեղեկատվական քաղաքականության հայեցակարգային հիմքերը, արդիականացնել ինստիտուցիոնալ կառավարման ֆունկցիոնալ համակարգը և ներդնել նորարարական մոդելներ քաղաքապետարանի կողմից կազմակերպվող հանրային բաց քննարկումներին հանրության հետ հաղորդակցության, վերջիններիս մասնակցայնության մակարդակի բարձրացման, հանրային իրազեկման, տեղեկատվության հասցեագրման գործընթացներին՝ հաղորդակցության պլանավորման և իրականացման միջոցով: Նախատեսվում է մինչ այժմ օրենքով սահմանված իրազեկման միջոցների կիրառումից զատ, ներդնել հավելյալ մեխանիզմներ՝ քննարկումներին մասնակցելու շահագրգռվածությունը բարձրացնելու և իրազեկման առավել ճկուն մեթոդներ կիրառելու նպատակով:

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2022 թվականի դեկտեմբերի ---ի
N ----- -Ա որոշման

	Ակնկալվող արդյունքներ. • կհաստատվի Երևանի քաղաքապետարանի պատրաստակամությունը քաղաքացիների, ՀԿ-ների, ՔՀԿ-ների հետ առավել ճկուն և պատրաստակամորեն աշխատելու վերաբերյալ, • կհաստատվի մասնակցային, թափանցիկ, հաշվետվողական կառավարման գործելաոճի շարունակականության ապահովումը՝ նորարար մեխանիզմների կիրառման միջոցով, • պարտավորության իրականացմամբ ակնկալվում է, որ Երևանի քաղաքապետարանի և քաղաքացիների միջև գործունեությունը կդառնա առավել թափանցիկ, քաղաքապետարանի կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկատվությունը կդառնա առավել հասանելի, որոշումների կայացման գործընթացում կապահովվի հանրային մասնակցություն, կկիրառվեն նորարար մեխանիզմներ և ի վերջո համայնք-քաղաքացի համագործակցությունը կդառնա առավել արդյունավետ և հաշվետվողական:
Հանձնառության կատարման ստուգման և չափման փուլերը	

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2022 թվականի դեկտեմբերի ---ի
N ----- -Ա որոշման

1. Ամեն ամիս իրականացնել Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպվող հանրային քննարկումներին քաղաքացիների մասնակցայնության և դրա արդյունավետության վերաբերյալ վերլուծություն: 2. Ամեն ամիս իրականացնել վերլուծություն այն մասին, թե հանրային քննարկումների վերաբերյալ քաղաքացիների, ՀԿ-ների, ՔՀԿ-ների քանի տոկոսն է իրազեկվել՝ ինտերնետի, օրաթերթի, բջջային կապի միջոցով: 3. Ամեն ամիս իրականացնել վերլուծություն այն մասին, թե համեմատած նախորդ տարիների՝ որքան է հանրային քննարկումների գործընթացին քաղաքացիների, ՀԿ-ների, ՔՀԿ-ների մասնակցության ցուցանիշը: 4. Ամեն տարի Երևանի քաղաքապետարանի պաշտոնական էջում հրապարակել հանրային քննարկման գործընթացին ներգրավված քաղաքացիների, ՀԿ-ների, ՔՀԿ-ների վերաբերյալ տեղեկատվություն: 5. Վարքագծային գիտության թիրախավորված հաղորդագրություններ քաղաքացիներին՝ փորձարկելու և ստուգելու քաղաքացիների ներգրավվածության լավագույն մոտեցումները: Վերոնշյալ քայլերը նախատեսվում է իրականացնել 2023-2024 թթ. ընթացքում:		
Հանձնառություն 2. Բարեվարքության համակարգ		
Հանձնառության անվանումը		Երևանի քաղաքապետարանում բարեվարքության համակարգի ներդնում 2023-2024թթ. համար
Պարտավորությունը իրականացնող մարմին		Երևանի քաղաքապետարան
Պարտավորությունը իրականացնող մարմնի պատասխանատու անձ **Էլ. հասցե** **Հեռախոս**		Զարգացման և ներդրումային ծրագրերի վարչության պետի տեղակալ՝ Մերի Հարությունյան zargacum@yerevan.am 011514227
Այլ	**Պետական կառավարման և այլ մարմիններ**	• ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն • ՀՀ վարչապետի աշխատակազմ՝ Քաղաքացիական ծառայության

շահագրգիռ մասնակից մարմիններ		գրասենյակ • Պետական կառավարման մարմիններ
	Հասարակական կազմակերպություններ, մասնավոր հատված, այլ կազմակերպություններ	• ԱՄՆ ՄԶԳ Հայաստան Բարեվարքության ծրագիր (ARMENIA INTEGRITY PROJECT) • «Թրանսպարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ • «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ • Այլ ՀԿ-ներ և կազմակերպություններ, որոնք կմիանան հանձնառությանը
Խնդրի սահմանումը		Բարեվարքության պատասխանատուի և էթիկայի հանձնաժողովի արդյունավետ գործարկումը կարևոր է Երևանի քաղաքապետարանում էթիկայի և բարեվարքության համակարգի լիարժեք ինստիտուցիոնալացման տեսանկյունից, ինչը համահունչ է ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 13-ի «Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարությունը, 2022-2024 թվականների ճանապարհային քարտեզը և արդյունքային շրջանակը, ռազմավարության իրականացման հսկողությունն ու համակարգումն ապահովող անձանց ցանկը հաստատելու մասին» թիվ 691-Լ որոշման 2-րդ հավելվածի (Հենասյուն 3՝ մարդկային ռեսուրսների կառավարում և հանրային ծառայություն) 3.16 կետին՝ Պետական համակարգում էթիկայի և բարեվարքության համակարգի լիարժեք ինստիտուցիոնալացում: Բարեվարքության համակարգի արդյունավետ գործարկման նախապայմաններից է անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների տրամադրումը բարեվարքության հարցերով կազմակերպիչներին և Երևանի քաղաքապետարանի համայնքային ծառայողներին:
Հիմնական նպատակ		Երևանի քաղաքապետարանում ներդնել բարեվարքության համակարգ, որով կբարելավի Երևանի քաղաքապետարանի համայնքային ծառայողների բարեվարքության աստիճանը, կբարելավվեն

	բարեվարքության վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի համայնքային ծառայողների կարողությունները, կբարձրանա նրանց կողմից բարեվարքության ընկալումը:
Հանձնառության համառոտ նկարագրություն	Իրականացնել համայնքային ծառայողների բարեվարքության վերաբերյալ դասընթացների շարք՝ Երևանի քաղաքապետարանի (ներառյալ՝ վարչական շրջանների) համայնքային ծառայողների, Երևանի քաղաքապետարանի էթիկայի հանձնաժողովի անդամների և բարեվարքության կազմակերպիչների համար: Ակնկալվող արդյունքներ. • Համայնքային ծառայողների շրջանում բարեվարքության համակարգի ձևավորում: • Բարեվարքության համակարգի միջոցով համայնքային ծառայությունում թափանցիկության ապահովում:
Հանձնառության կատարման ստուգման և չափման փուլերը	
1. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մարդկային ռեսուրսների կառավարման վարչության և համապատասխան ՔՀԿ-ների, ՀԿ-ների համագործակցությամբ պարբերաբար իրականացնել թեմատիկ և գործնական դասընթացների շարք: 2. Համայնքային ծառայողների շրջանում պարբերաբար իրականացնել թեմատիկ ստուգման առաջադրանքներ, որոնց միջոցով հեշտ կլինի պարզել իրականացված դասընթացների արդյունավետությունը: Վերոնշյալ միջոցառումները նախատեսվում է իրականացնել 2023-2024թթ. ընթացքում:	

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2022 թվականի դեկտեմբերի ---ի
N ----- -Ա որոշման

Հանձնառություն 3. «Going Green» հարթակի ստեղծում			
Հանձնառության անվանումը		Երևանի քաղաքապետարանի պաշտոնական էջում՝ «Կանաչ գոչծողություններ» անվանումով հարթակի ստեղծում	
Հանձնառությունն իրականացնող մարմին **Հանձնառությունն իրականացնող մարմնի պատասխանատու անձ** **Էլ. հասցե** **Հեռախոս**		Երևանի քաղաքապետարան Զարգացման և ներդրումային ծրագրերի վարչության պետի տեղակալ՝ Մերի Հարությունյան zargacum@yerevan.am 011514227	
Այլ շահագրգիռ մասնակից	**Պետական կառավարման և այլ մարմիններ**	«Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն » ՓԲԸ	
	Հասարակական կազմակերպություններ,	• «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ	Այլ ՀԿ-ներ և կազմակերպություններ,

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2022 թվականի դեկտեմբերի ---ի
N ----- -Ա որոշման

մարմիններ	**մասնավոր հատված, այլ կազմակերպություններ**	• «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ	որոնք կմիանան հանձնառությանը
Խնդրի սահմանումը		Ներկայում կլիմայի փոփոխության դեմ պայքարի շրջանակներում շատ կարևոր է քայլեր ձեռնարկել քաղաքային միջավայրում բարձրացնելու էներգախնայողության և էներգաարդյունավետության մակարդակը և զարգացնել վերականգնվող էներգետիկան՝ կրճատելով CO2 արտանետումների մակարդակը: Վերջին մի քանի տարիների ընթացքում Երևանը զգալի քայլեր է ձեռնարկել կլիմայի փոփոխության ազդեցության մեղմման, էներգաարդյունավետության, վերականգնվող էներգիայի և կլիմայի հարմարվողականության հատուկ միջոցառումների իրականացման ուղղությամբ: Ունենք մշակված ռազմավարական ծրագրեր, որոնք նախադեպային են այս տարածաշրջանում: Դրանցից մեկն էլ «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագիրն է, որը մշակվել է ԱՊՀ տարածաշրջանում առաջին անգամ և հիմնված է ՎԶԵԲ-ի մեթոդաբանության վրա՝ Տեղական բնապահպանական նախաձեռնությունների միջազգային խորհրդի (ICLEI) և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության հետ համատեղ: Երևանի համար մշակված այս ծրագիրը ՎԶԵԲ-ի «Կանաչ քաղաքներ» մոտեցման առաջին կիրառությունն է: «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագիրը մինչև 2030 թ. իրականացվելիք կանաչ գործողությունների ռազմավարական փաստաթուղթ է, որի իրագործման համար նպատակաուղղված քաղաքականություն է իրականացավում համայնքի կողմից: Ներկայում մշակման փուլում է գտնվում քաղաքի համար կլիմայի փոփոխության հարմարվողականության ռազամավարական ծրագրի կազմման գործընթացը: Մեծածավալ աշխատանքներ են իրականացվել և իրականացվում վերականգնվող էներգիայի աղբյուրների կիրառման, բազմաբնակարան և	

	հասարակական շենքերի ջերմամեկուսացման, էներգաարդյունավետության մակարդակի բարձրացման, տրանսպորտային համակարգի արդիականացման և խելացի լուծումների կիրառման ուղղությամբ: Վերոնշյալ աշխատանքների համար անհրաժեշտ է ստեղծել միասնական, թափանցիկ, նորարարական հարթակ «Going Green» անվանումով, որը հնարավորություն կտա բոլոր շահագրգիռ կողմերին իրազեկված լինելու իրականացված միջոցառումների վերաբերյալ:
Հիմնական նպատակ	Երևանի քաղաքապետարանն առաջարկում է սկսել «Going Green» ծրագիրը, որը կներառի համապարփակ մոտեցում մունիցիպալ կառավարման բոլոր մակարդակներում կայուն գործելակերպի նկատմամբ: Ծրագիրը կունենա երեք հիմնական բաղադրիչ. • Կանաչ գործողություններ – Վեբ հաշվետվություն ջերմոցային գազերի արտանետումների, օդի աղտոտվածության մակարդակի, դրանց՝ շրջակա միջավայրի ազդեցության վերաբերյալ, որն արտացոլվում է քաղաքապետարանի կողմից բացասական ազդեցությունը նվազեցնելու համար ձեռնարկված միջոցառումների, ծրագրերի իրականացման միջոցով, • «Կանաչ կնիք» – Երևանի քաղաքապետարանն իր լիազորությունների շրջանակում կշնորհի ամենամյա Կանաչ կնիքներ հիմնարկներին և գերատեսչություններին՝ հիմնվելով կայունության չափանիշներին համապատասխանության վրա: Նպատակն այն է, որ մինչև 2028 թվականը Երևանի քաղաքապետարանի բոլոր կառույցները լիովին համապատասխանեն «Կանաչ կնիքի» չափանիշներին, • Կանաչ գնումներ – Երևանի քաղաքապետարանը պարտավորվելու է գնել ապրանքներ և ծառայություններ, որոնք կարող են նպաստել կայուն սպառման և արտադրությանը:
Հանձնառության համառոտ նկարագրություն	«Տեղական ԲԿԳ» գործողությունների ծրագրի շրջանակում նախատեսվում է

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2022 թվականի դեկտեմբերի ---ի
N ----- -Ա որոշման

	Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքում ստեղծել «Going green» անվանումով հարթակ, որտեղ կարտացոլվեն քաղաքապետարանի կողմից իրականացված էներգաարդյունավետ ծրագրերի արդյունքում որքան են կրճատվել ջերմոցային գազերի արտանետումները: Հարթակը պարբերաբար կթարմացվի և կպարունակի քաղաքապետարանի կողմից իրականացված էներգաարդյունավետ ծրագրերի արդյունքում կրճատված ջերմոցային գազերի արտանետումների, խնայված էլեկտրաէներգիայի վերաբերյալ տեղեկատվություն, կխթանի համայնքային ենթակայության կազմակերպություններին՝ համապատասխանել կայունության չափանիշներին և ստանալ համապատասխան «Կանաչ կնիք», կնպաստի կանաչ գնումների ընթացակարգով ապրանքների և ծառայությունների ձեռքբերմանը, որոնք կարող են նպաստել կայուն սպառման և արտադրությանը: Հանձնառության իրականացման արդյունքում կբարելավվի իրազեկվածությունը «կանաչ» ծրագրերի իրականացման և վերահսկման նկատմամբ: Ջերմոցային գազերի արտանետման հիմնական ոլորտը էներգետիկան է, իսկ ջերմոցային գազերի մեծ մասն արտադրվում է քաղաքային միջավայրում, հատկապես ուրբանիզացիայի բարձր մակարդակ ունեցող քաղաքներում: Այս առումով Երևանը թիրախային քաղաք է համարվում: Քաղաքներն օգտագործում են աշխարհի էներգիայի մատակարարման մեծ մասը և պատասխանատու են էներգիայի հետ կապված ջերմոցային գազերի գլոբալ արտանետումների՝ շուրջ 70 տոկոսի համար: Այս արտանետումների աճող մակարդակն արդեն հանգեցնում է կլիմայի փոփոխության: Մեծածավալ աշխատանքներ են իրականացվել և իրականացվում վերականգնվող էներգիայի աղբյուրների կիրառման, բազմաբնակարան և հասարակական շենքերի ջերմամեկուսացման, էներգաարդյունավետության մակարդակի բարձրացման, տրանսպորտային համակարգի արդիականացման և խելացի

	լուծումների կիրառման ուղղությամբ: Ակնկալվող արդյունքներ. • Կստեղծվի հնարավորություն ծանոթանալու քաղաքապետարանի կողմից էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտում իրականացված ծրագրերին: • Կհաստատվեն էներգետիկայի ոլորտում իրականացված ծրագրերի արդյունքում կրճատված էներգետիկ ցուցանիշները: • Կհաստատվեն էներգետիկայի ոլորտում իրականացված ծրագրերի արդյունքում կրճատված ջերմոցային գազերի ցուցանիշները:
Հանձնառության կատարման ստուգման և չափման փուլերը	
1. «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ–ի հետ համատեղ «Going green» հարթակի ստեղծման աշխատանքների կազմակերպում: 2. Իրականացված «կանաչ» ծրագրերի տեղայնացում և հստակ գործիքակազմի ներդնում, որի միջոցով տարեկան կտրվածքով հնարավոր կլինի տեսնել ծրագրից ակնկալվող արդյունքները: 3. Ծրագրի իրականացման արդյունքում տվյալների պարբերաբար թարմացման և վերլուծության աշխատանքների իրականացում: Վերոնշյալ միջոցառումները նախատեսվում է իրականացնել 2023-2024թթ. ընթացքում:	

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ՏԵՂԱԿԱՆ ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԵՐԵՎԱՆԻ 2023-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Անհրաժեշտությունը**

2022թ. մայիսի 17-ից Երևանը միացել է «Տեղական բաց կառավարման գործընկերություն» (այսուհետ՝ Տեղական ԲԿԳ) նախաձեռնությանը: Նախաձեռնության նպատակն է քաղաքացիական հասարակության ակտիվ ներգրավմամբ նպաստել տեղական ինքնակառավարման համակարգի բարելավմանը և արդյունավետության բարձրացմանը՝ խթանելով քաղաքապետարան-քաղաքացի հարաբերությունների թափանցիկությունը և վստահությունը: Հիմնական գործողությունն է երկամյա ժամկետով համատեղ մշակել գործողությունների ծրագիր և վերահսկել ծրագրի իրականացումը:

Ի կատարումն Տեղական ԲԿԳ շրջանակում ստանձնած պարտավորությունների՝ 2022 թվականի սեպտեմբերից Երևանի քաղաքապետարանը նախաձեռնել է Երևանի 2022-2024 թվականների գործողությունների ծրագրի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) մշակման գործընթացը: Նախագիծը մշակվել է Երևանի քաղաքապետարանի, քաղաքացիական հասարակության, միջազգային գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչների, ակտիվ քաղաքացիների հետ համատեղ՝ հիմք ընդունելով ծրագրերի մշակման և իրականացման արդյունքում վերջիններիս ներկայացրած առաջարկությունները:

Ծրագիրը կազմվել է ինչպես Երևանի քաղաքապետարանի, այնպես էլ՝ քաղաքացիական հասարակության ներկայացրած առաջարկությունների հիման վրա՝ ներառելով այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են հանրային կառավարման գործընթացում քաղաքացիների մասնակցության բարձրացումը, համայնքային ծառայողների շրջանում բարեվարքության համակարգի գործընթացի կայացումը, Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքում «Going green» հարթակի ստեղծումը:

Ծրագիրը մշակելիս Երևանի քաղաքապետարանը սահմանել էր առաջնահերթ ուղղություններ, որոնք բխում էին «Երևանի զարգացման 2019-2023 թթ. հնգամյա ծրագրի» գերակայություններից, ինչպես նաև «Տեղական ԲԿԳ» նախաձեռնության սկզբունքներից, ԲԿԳ (Վաշինգտոն) քաղաքական ուղղություններից և Երևանին ներկայացված առաջարկներից, Տեղական ԲԿԳ աշխատանքային խմբի նիստի ժամանակ ՔՀԿ գործընկերների առաջարկների տրամաբանությունից: Առաջարկների հավաքագրման փուլում ստացվեց 45 առաջարկ, որոնց մի մասը համապատասխանում էին սահմանված առաջանահերթություններին և ԲԿԳ սկզբունքներին, որոշները կամ չէին համապատասխանում ԲԿԳ սկզբունքներին, կամ էլ՝ մասնակի էին համապատասխանում և ենթակա էին միավորման այլ առաջարկների

հետ: Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը՝ Երևանի քաղաքապետարանում տեղի ունեցավ հանդիպում-քննարկում՝ Երևանի քաղաքապետի խորհրդականի, Զարգացման և ներդրումային ծրագրերի վարչության աշխատակիցների, ԲԿԳ-Հայաստան գրասենյակի համակարգող թիմի, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ: Հանդիպումը կազմակերպվել էր Երևանի քաղաքապետարանի կողմից: Մասնակիցները միասին քննարկեցին առաջարկները և դասակարգեցին դրանք թվայնացման, մասնակցային և ինովացիոն խմբերի: Առաջարկներից հանրային քննարկման համար դիտարկվեցին ԲԿԳ սկզբունքներին և պահանջներին համապատասխան առաջարկները և գաղափարները, որոնք մասամբ համապատասխանում էին պահանջներին և կարիք ունեին լրացուցիչ քննարկման ոլորտի պատասխանատուների և առաջարկ ներկայացնողների հետ:

2. **Նպատակը**

Սույն գործողությունների ծրագրի մշակումը ժողովրդավարական ուղիղ մասնակցության արդյունք է: Նախագծում հասցեագրվել են խնդիրներ, տեսլականներ և գործողություններ, որոնք կբարձրացնեն քաղաքապետարան-քաղաքացի հարաբերություններում վստահությունը, ինչպես նաև կբարելավեն հանրային կառավարման թափանցիկությունը և հաշվետվողականությունը:

3. **Ակնկալվող արդյունքը**

Նախագծի ընդունմամբ տեղական ինքնակառավարման համակարգի, քաղաքացիական հասարակության և միջազգային կազմակերպությունների համատեղ մասնակցությամբ կմշակվեն և կիրականացվեն բարեփոխումներ հետևյալ ոլորտներում՝

- Տեղական մակարդակում հանրային մասնակցության ապահովում՝ որոշումների կայացման գործընթացում
- Համայնքային ծառայողների շրջանում բարեվարքության համակարգի գործընթացի կայացում
- Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքում «Going green» հարթակի ստեղծում
-

4. **Ներգրավված ինստիտուտները և կազմակերպությունները**

Նախագծի մշակվել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի Զարգացման և ներդրումային ծրագրերի վարչության Երևանի «Տեղական բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության համակարգող թիմի կողմից, քանի որ գործընթացի համակարգումը վերապահված է աշխատակազմի Զարգացման և ներդրումային ծրագրերի վարչությանը:

Նախագծի մշակմանը մասնակցել են Վարչապետի աշխատակազմի «Բաց կառավարման գործընկերություն-Հայաստան» քարտուղարությունը, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, հասարակական կազմակերպությունները, միջազգային կազմակերպությունները, փորձագիտական խմբերը և ակտիվ քաղաքացիները:

Հիմք ընդունելով վերը շարադրվածը, ինչպես նաև «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 33-րդ կետը, համաձայն որի՝ Երևանի քաղաքապետը տեղական ինքնակառավարմանը վերաբերող և օրենքով այլ մարմինների լիազորություններին չվերապահված հարցերի վերաբերյալ ընդունում է իրավական ակտեր, որոշման նախագծով Երևանի ավագանու հաստատմանն է ներկայացվում «Տեղական բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակում Երևանի 2023-2024 թվականների գործողությունների ծրագիրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

««ՏԵՂԱԿԱՆ ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԵՐԵՎԱՆԻ 2023-2024 ԹԹ. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

««Տեղական բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակում Երևանի 2023-2024 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐ.ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

««ՏԵՂԱԿԱՆ ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԵՐԵՎԱՆԻ 2023-2024 ԹԹ. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

««Տեղական բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակում Երևանի 2023-2024 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐ.ՍԱՐԳՍՅԱՆ